Հեղինակ՝ Լուսինե Գրիգորյան

ՄԵԴԻԱ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ

ՀՏԴ 070:316.77:02(07)
ԳՄԴ 76.0+60.524.22+78.3g7
Գ 888

ՄԵԴԻԱ
ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆ

Հեղինակ՝
Լուսինե Գրիգորյան

Գ 888 Մեդիագրագիտությունը գրադարանում / Լ. Գրիգորյան.- Եր.:
Մեդիա նախաձեռնությունների կենտրոն ՀԿ, 2026 -49 էջ:

Խմբագրական կազմ
Գեղամ Վարդանյան
Անի Եղիազարյան
Լուսինե Գրիգորյան
Հերիքնազ Հարությունյան
Նունե Սարգսյան

Ձևավորումը՝ Նատալի Հարությունյանի
Որոշ պատկերների պատրաստման համար օգտագործվել
են արհեստական բանականության գործիքներ:

Գրքույկը մշակել է Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը: Այն «Մեդիա-գրագիտություն. հավելված» գրքույկների շարքի մաս է: Այս ուղեցույցը ներկայացնում է նմուշային 4 մոդուլ, ինչպես նաև լրացուցիչ նյութերի, մեդիագրագիտության ձեռնարկների հղումներ, որոնց օգնությամբ գրադարանները կարող են մշակել սեփական ծրագրերը համայնքի տարբեր խմբերի հետ աշխատելու համար:

Շարքում ներառված են հետյալ թեմատիկ գրքույկները.

Աստղիկ Բալայան
«Մեդիագրագիտությունը տարրական ծրագրում»

Լուսինե Գրիգորյան
«Մեդիագրագիտությունը գրադարանում»

Գեղամ Վարդանյան, Օֆելյա Սիմոնյան
«Ճանաչել ու դիմագրավել ապատեղեկատվությանը. դեպքերի քննարկում»

Տպագրված է «Ասողիկ» հրատարակչությունում:

ISBN 978-9939-1-2251-9 **© Մեդիա նախաձեռնությունների կենտրոն, 2026**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

4 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

7 ՄՈԴՈՒԼ 1. ԹՎԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՐԶ ԿԱՆՈՆՆԵՐ ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

18 ՄՈԴՈՒԼ 2. ՄԵԴԻԱՅԻ ՈՒ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ. ՖԻԼՄԻ ԴԻՏՈՒՄ - ՔՆՆԱՐԿՈՒՄ

30 ՄՈԴՈՒԼ 3. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՈՒՄ ԵՎ ՍՏՈՒԳՈՒՄ. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐ

43 ՄՈԴՈՒԼ 4. ՄԵԴԻԱՅԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գրադարանները վաղուց միայն գրքերի պահոց չեն. այսօր դրանք դիտարկվում են որպես համայնքային կրթամշակութային կենտրոններ, որոնք առաջարկում են նաև միջոցառումներ և ուսուցում տարբեր թեմաներով, այդ թվում և՛ թվային, և՛ մեդիագրագիտության: ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2022թ. «Հանրային գրադարանների մասին մանիֆեստը» ընդգծում է, որ գրադարանը համայնքի ինֆորմացիոն կենտրոնն է. այն պետք է ապահովի բազմաբնույթ ու չգրաքննվող տեղեկատվության, ռեսուրսների ու տեխնոլոգիաների հասանելիություն: Սա գրադարանը դարձնում է ապատեղեկատվության դեմ պայքարելու և ժողովրդավարական մասնակցությունը խթանելու վստահելի հարթակ:

Գրադարանն այն եզակի վայրերից է, որ հասանելի է բոլորին՝ անկախ սոցիալական կամ կրթական դիրքից:

Մեդիագրագիտության առաջատար փորձ ունեցող երկրները, ինչպես Ֆինլանդիան ու Շվեդիան, գրադարանները դիտում են որպես հիմնական դերակատարներ թվային և մեդիագրագիտության տարածման գործում: Գրադարանների թիրախում հատկապես մեծահասակները և կրթական համակարգից դուրս մնացած խմբերն են. այստեղ ապահովում են նրանց

շարունակական կրթությունը և ակտիվ մշակութային կյանքը:

2023թ. Հայաստանի ընդունած «Ապատեղեկատվության դեմ պայքարի հայեցակարգը» գրադարանը դիտարկում է որպես համայնքներում մեդիագրագիտության տարածման կենտրոն, իսկ 2024թ. «Գրադարանների ու գրադարանային գործի մասին» օրենքում արվել են փոփոխություններ, որոնք նույնպես շեշտում են գրադարաններում թվային գրագիտության, ինֆորմացիոն հասանելիության կարևորությունը, համայնքների հետ ակտիվ աշխատանքում նրանց դերը:

Այսպիսով, գրադարանավարի առաքելությունը շատ ավելին է, քան միայն գրքի պահպանությունը. նա դառնում է համայնքի վստահելի ուղեկիցը տեղեկատվական դարաշրջանում, օգնում է ապահով ու գրագետ նավարկել տեղեկատվական թվային միջավայրում:

Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը (ՄՆԿ) անցկացրել է գրադարանների մեդիագրագիտության ինտեգրման կարիքների գնահատում և ինտեգրման մեթոդների վերաբերյալ հայեցակարգ-առաջարկ է մշակել:

ՄՆԿ-ն առաջարկում է գրադարաններին՝ հիմնել Մեդիագրագիտության անկյուններ, որոնք կառաջար-

կեն պարզ դասընթացներ, հանդիպումներ, դիտում-քննարկումներ՝ մեդիայի, խոսքի ազատության, թվային անվտանգության, տեղեկությունների ստուգման և այլ թեմաներով:

Հիմնվելով այդ հայեցակարգի տրամաբանության վրա՝ այս ուղեցույցը ներկայացնում է նմուշային 4 մոդուլ, ինչպես նաև լրացուցիչ նյութերի, մեդիագրագիտության ձեռնարկների հղումներ, որոնց օգնությամբ գրադարանները կարող են մշակել սեփական ծրագրերը համայնքի տարբեր խմբերի հետ աշխատելու համար:

ՄՈԴՈՒԼ 1

ԹՎԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՐԶ ԿԱՆՈՆՆԵՐ ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ	▸ Մասնակիցները կիմանան՝ ինչն է համարվում անձնական տվյալ: ▸ Կկարողանան ստեղծել և օգտագործել ավելի ապահով գաղտնաբառեր: ▸ Կկարողանան կիրառել գաղտանաբառերի պահպանման մեթոդները, ակտիվացնել երկփուլային անվտանգությունը: ▸ Կկարողանան ավելի պաշտպանված լինել առցանց միջա-վայրում:

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ	ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ	ԱՆՀՐԱԺԵՇՏ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ
60-90 ր	մեծահասակներ, տարեցներ	▸ պրոյեկտոր և էկրան ▸ որակյալ ինտերնետ կապ ▸ թուղթ, գրիչ, մատիտներ, կպչուն թղթեր

Ժամանակակից տեխնոլոգիաներն ու արհեստական բանականության գործիքներն օգնում են հորինվածքն այնքան մոտեցնել իրականությանը, որ թվային խաբեություններն ու խարդախությունները հաճախ մոլորեցնում են նույնիսկ մասնագետներին:

Ձեղծարարները, սակայն, հիմնականում թիրախավորում են խոցելի խմբերին՝ թոշակառուներին, երեխաներին, ֆինանսական խնդիրներ ու վարկեր ունեցող մարդկանց, բոլոր նրանց, ում վախերը, հույզերը հեշտ է օգտագործել մոլորեցնելու համար:

Կարևոր է այս թեմայով զրույցներ ու սեմինարներ անցկացնել հանրության տարբեր խմբերի հետ և փոխանցել գոնե մի քանի տարրական ու պարզ կանոն, որոնք կօգնեն նրանց ավելի զգոն ու զգուշավոր լինել:

Ահա այն մի քանի կարևոր թեմաները, որոնք անհրաժեշտ է քննարկել:

Գաղտնաբառեր

Մարդիկ հաճախ գաղտնաբառերը հեշտ հիշելու համար օգտագործում են իրենց կամ հարազատների անունները, ծննդյան տարեթվերը, այլ հիշարժան բառեր, որոնք բավական հեշտ է գտնել ու կռահել. երբեմն դրա համար բավարար է մարդկանց սոցցանցային օգտահաշիվներն ուսումնասիրելը: Գաղտնաբառը կարևոր է, քանի որ այն իմանալու դեպքում կարող են մուտք գործել մեր օգտահաշիվներ, տիրանալ անձնական տվյալներին, կեղծել դրանք, օգտագործել այլ զեղծարարությունների համար...

Առաջարկվող գործողություններ

1 Դասընթացավարը մասնակիցներին ցույց է տալիս գաղտաբառի մի քանի տարբերակ և առաջարկում քննարկել, թե դրանցից որն է ավելի ապահով, և ինչու, օրինակ՝

Դասընթացավարը մասնակիցներին ներկայացնում է ապահով գաղտնաբառերի մի քանի կանոն և առաջարկում վերևում նշված թույլ գաղտնաբառերը փորձել որոշակիորեն «ուժեղացնել»:

Ապահով գաղնտաբառը պետք է ունենա առնվազն 12 նիշ, բայց ցանկալի է՝ 14-ից ավելի: Պիտի ներառի մեծատառեր և փոքրատառեր, թվեր և սիմվոլներ: Չպիտի պարունակի անձի հետ նույնականացվող տվյալներ:

2 Դասընթացավարը ցույց է տալիս գաղտնաբառերի ստուգման առցանց գործիք (օրինակ՝ https://pw.cyberhub.am/ կամ https://password.kaspersky.com/) և մասնակիցներին առաջարկում է հորինել գաղտնաբառեր և ստուգել տվյալ գործիքով՝ պարզելու, թե որքանով են դրանք ապահով: Սովորում են նաև նմանատիպ գործիքների միջոցով ստեղծել ուժեղ գաղտնաբառեր:

3 Դասընթացավարը մասնակիցներին ներկայացնում է հիշվող նախադասության կամ արտահայտության մեթոդը և առաջարկում է փորձարկել այն՝ մի քանի տարբերակ գրի առնելով թղթի վրա:

Պետք է ընտրել որևէ հիշվող նախադասություն կամ արտահայտություն, ապա, օգտագործելով բառերի առաջին տառերը կամ փոփոխելով բառամիջի տառերը, թվեր ու նշաններ ավելացնելով կազմել գաղտնաբառեր, որոնք ավելի հեշտ կլինի հիշել, բայց բարդ կլինի կռահել:

Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում →

Yia&Habes_37

Առավոտյան սուրճը խմում եմ ժամը 8-ին →

Aravotsurch@8AM

Կամ անգլերեն

I go to school on the number 68 bus every morning →

IgtS_t#68bem

To be or not to be →

2B0rN2B!Life

4 Դասընթացավարը խմբին հարցնում է, թե ինչպես և որտեղ են մասնակիցները պահում գաղտնաբառերը: Ցանկալի է, որ ամեն օգտահաշվի համար մարդն ունենա տարբեր գաղտնաբառեր, իսկ այդքանը հիշելու համար պետք է ապահով պահել դրանք: Որպես պարզ տարբերակ՝ դրանք կարելի է պահել առանձին փաստաթղթով համակարգչում կամ նոթատետրում:

Ապա դասընթացավարը մեծ էկրանին բացում և խմբի հետ միասին ուսումնասիրում է մի քանի տարածված զննարկիչների կարգավորումները և գաղտնաբառերի պահպանման հնարավորությունները (Google Chrome, Microsoft Edge, Mozilla): Զննարկիչները դրանք հիշում են և պահպանում, ու ամեն անգամ, օրինակ էլ-փոստ կամ սոցցանցային հաշիվ մտնելիս, կարիք չի լինում նորից գրել գաղտնաբառը: Սա ապահով ու բավական հեշտ մեթոդ է:

Առավել ապահով է՝ օգտվել գաղտնաբառերի կառավարման ծրագրերից, օրինակ՝ Keypass, Proton, Bitwarden, որոնք անվճար տարբերակ ունեն:

Մասնակիցները բաժանվում են խմբերի, և յուրաքանչյուր խումբ առանձին համակարգչով ուսումնասիրում/փորձարկում է մեկ զննարկիչ և մեկ գաղտնաբառերի կառավարիչ:

5 Գաղտնաբառից բացի՝ շատ կարևոր է ակտիվացնել երկփուլային անվտանգությունը էլեկտրոնային փոստի կամ սոցցանցային հաշվի անվտանգության համար՝ գրանցել հեռախոսահամար, էլ-փոստի հասցե, որին հաղորդագրություն կամ կոդ կուղարկվի նոր սարքից օգտահաշիվ մուտք գործելիս: Մասնակիցները դասընթացավարի ուղղորդմամբ ստուգում և ակտիվացնում են երկփուլային անվտանգությունը իրենց սոցցանցային հարթակներում, օրինակ՝ Ֆեյսբուքում, օգտվելով այս ուղեցույցից (https://tinyurl.com/3pfjpxrt):

Անձնական տվյալներ

Այսօր, երբ սովորում, աշխատում, ծանոթանում, գնումներ ենք անում առցանց, հաճախ նաև անձնական տվյալներ ենք լրացնում կամ փոխանցում տարբեր հարթակներում՝ ծննդյան օր, հասցե, բանկային տվյալներ, բայց նաև՝ անձնական կյանքի տվյալներ, որոնք հասանելի են սոցցանցերում տեղադրվող մերնկարների, գրառումների տակ արվող մեկնաբանությունների, հավանումների, մեր նախասիրությունների մասին տեղեկությունների միջոցով... Երբեմն մենք նույնիսկ չենք պատկերացնում, թե որքան բան գիտի համացանցը մեր մասին:

Առաջարկվող գործողություններ

1 Դասընթացավարը բացում է Elections.am կայքի Ընտրողների ռեգիստրը, և միասին որոնում են մասնակիցներից որևէ մեկին՝ տեսնելու, թե ինչ տեղեկություններ են հասանելի:

Անձնական տվյալներն այս հարթակում հասանելի են ընտրողների ցուցակների թափանցիկության ու վերահսկելիության համար, սակայն այս տվյալները կարող են նմանապես հասանելի լինել բոլորին, այդ թվում՝ զեղծարարներին:

2 Դասընթացավարը մասնակիցներին առաջարկում է նաև ինքնուրույն որոնում կատարել Գուգլում կամ որոնողական այլ հարթաներում՝ տեսնելու, թե ինչ տեղեկություններ են հանրայնորեն հասանելի իրենցից յուրաքանչյուրի մասին:

3 Մասնակիցները խմբերով ուսումնասիրում են միմյանց սոցցանցային էջերը և քննարկում, թե ամեն մեկի մասին ինչ տեղեկություններ կարող են գտնել, արդյո՞ք իրենք գիտեին, որ իրենց մասին այդ տեղեկությունները հասանելի են, թե՞ ոչ:

Ապա դասընթացավարը մասնակիցներին առաջարկում է 10 րոպե տրամադրել և վերանայել իրենց օգտահաշիվներից մեկը՝ հետևելով այս սկզբունքներին.

◉ Վերանայեք ընկերների ցուցակները և հեռացրեք նրանց, ում չեք ճանաչում կամ տարիներ ի վեր ընդհանրապես չեք առնչվում:

◉ Ջնջեք հին նամակներն ու հաղորդագրությունները:

◉ Վերանայեք գաղտնիության կարգավորումները սոցցանցերում:

◉ Վերանայեք ձեր մասին տեղեկությունները, հրապարակված անձնական տվյալները:

4 Դասընթացավարը մասնակիցներին առաջարկում է իրավիճակներ խմբային քննարկման համար: 4-5 հոգանոց խմբերով պատմությունները քննարկելուց և եզրակացությունները / խորհուրդները թղթի վրա գրի առնելուց հետո, խմբերը դրանք ներկայացնում են բոլորին և ամփոփում դասընթացավարի հետ միասին:

Դուք ստանում եք այսպիսի զանգ.

«Բարի երեկո: Ես բանկից եմ զանգում: Ձեր քարտից կասկածելի փոխանցում է գրանցվել՝ 250,000 դրամ: Եթե դա դուք չեք, մենք պետք է հիմա արգելափակենք ձեր հաշիվը: Խնդրում եմ արագ հաստատեք ձեր քարտի տվյալները՝ որպեսզի կարողանանք կանխել գումարի կորուստը»:

Որո՞նք են ձեր գործողությունները:

Վայբերով ստանում եք ծանուցում.

«Ձեր հաշիվը վարակվել է, ակտիվացրեք աջակցության համար տրված շուրջօրյա համարով: Եթե հիմա չկապվեք մեզ հետ, կորցնելու եք գումար և հեռախոսի մեջ հասանելի տվյալները»:

Հավատո՞ւմ եք, թե՞ ոչ, ինչո՞ւ:

Ֆեյսբուքում ստացել եք այսպիսի հաղորդագրություն.

«Ծնորհավորում ենք, Դուք հնարավորություն ունեք շահելու մեր ընկերության խաղարկած iPhone 15-երից մեկը: Առաջիկա 10 րոպեի ընթացքում հաստատեք ձեր շահումը՝ ուղարկելով անձնագրի լուսանկարը և բանկի քարտի համարն ու հետևի 3 թվերը, նվերի փոխանցումը կազմակերպելու համար»:

Ի՞նչ կանեք ու ինչո՞ւ:

Հարցեր քննարկման համար

Ի՞նչ կանեք դուք նման հաղորդագրություն ստանալու դեպքում:

Ինչպե՞ս կարելի է ստուգել՝ սա խաբեություն է, թե՞ ոչ:

Ո՞վ է ուղարկողը, ինչպե՞ս կարող ենք այլ կերպ կապ հաստատել նրա հետ (բանկի, խանութի, ընկերության):

Ի՞նչ էմոցիաներ է խաղարկում զեղծարարը (գումար կորցնելու վախ, շփոթմունք, արժեքավոր շահումի ուրախություն...) և ինչպես է համոզում:

5 Դասընթացավարը ներկայացնում է **Cyberhub** հարթակը (https://cyberhub.am/hy/), որտեղ կարելի է գտնել ռեսուրսներ և աջակցություն թվային անվտանգության թեմայով, ինչպես նաև **ԿիբեռՉաթ** (https://chat.cyberhub.am/hy/) հարթակը՝ երեխաների ու ծնողների համար, որտեղ կարելի է ստանալ արագ և անվճար օգնություն, և առաջարկում է փորձարկել այն:

Օգտակար ռեսուրսներ

- «Թվային անվտանգություն և մեդիա հիգիենա», էջ 96, «Մեդիա ուգիտություն» ձեռնարկ
https://tinyurl.com/yyj6smvy

- «Թվային անվտանգություն և մեդիա հիգիենա» թեման, «Մեդիա ուգիտություն» առցանց դասընթացում
https://tinyurl.com/2msk5nwh

- Ցանցառ. թվային անվտանգության խաղ
https://tsantsar.media.am/

- Էնցիկլոմեդիա. անձնական տվյալներ
https://tinyurl.com/4b4p75tr

- Էնցիկլոմեդիա. ֆիշինգ
https://tinyurl.com/2uazy5xn

- Էնցիկլոմեդիա. գաղտնաբառեր
https://tinyurl.com/mrycaeh2

- Տեսանյութ. Գաղտնաբառերի պաշտպանությունը և երկփուլային վավերացումը
https://tinyurl.com/wvjk476h

- ՆԳՆ Կիբեռոստիկանություն տելեգրամյան ալիք
https://t.me/cyberpolice_arm

- «Զգո՛ւյշ, երեխաներ են. ուղեցույց երեխաների անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ»
https://tinyurl.com/y99cw92s

- Անձնական տվյալների պաշտպանության գործակալության էջը Ֆեյսբուքում
https://www.facebook.com/PersonalDataArmenia/

- Անձնական տվյալների պաշտպանության մասին ՀՀ օրենք
https://www.arlis.am/hy/acts/98338

- Google Clasroom
https://tinyurl.com/mr2crpbz

- Google Authenticator հավելվածն Անդրոիդ համակարգի համար
https://tinyurl.com/msbcunsn

- Google Authenticator հավելվածն iOS համակարգի համար
https://tinyurl.com/bdzfms56

ՄՈԴՈՒԼ 2

ՄԵԴԻԱՅԻ ՈՒ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ. ՖԻԼՄԻ ԴԻՏՈՒՄ - ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ	▸ Մասնակիցները կծանոթանան լրագրողի մասնագիտությանը: ▸ Կհասկանան լրագրության կարևորությունը ժողովրդավարական հասարակությունում: ▸ Կկարողանան տարբերել որակյալ լրագրողական նյութերը: ▸ Կծանոթանան լրագրողական էթիկայի սկզբունքներին:		
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ	ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ	ԱՆՀՐԱԺԵՇՏ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ	
90 ր	մեծահասակներ (այդ թվում՝ դասավանդողներ)	▸ պրոյեկտոր և էկրան ▸ որակյալ բարձրախոս, ▸ որակյալ ինտերնետ կապ ▸ սենյակում լույսի կարգավորման հնարավորություն ▸ թուղթ, գրիչ	

Ֆիլմերի միջոցով ուսուցումը փորձված մեթոդաբանություն է, որ շատ է կիրառվում հատկապես ոչ ֆորմալ կրթության մեջ: Աշխարհի տարբեր գրադարաններում գործում են ինչպես գրքի, այնպես էլ ֆիլմի ակումբներ: Ֆիլմի, տեսանյութի դիտումը հնարավորություն է տալիս թեմայի մեջ խորասուզվել, ապրումակցել, ոգեշնչվել, տեղեկանալ, հարցադրումներ անել... Այն նաև հնարավորություն է ստեղծում դիտումից հետո շարունակելու քննարկումը թե՛ ֆիլմի ներկայացրած թեմայի, թե՛ հենց ֆիլմի մասին՝ որպես մեդիա, որպես լսարանի վրա ազդելու արտահայտչամիջոց և գործիք:

Օրինակ, Հայաստանի դպրոցներում կիրառվել է չեխական «Մեկ աշխարհը դպրոցում» ուսուցման մոդելը՝ հիմնված վավերագրական ֆիլմերի նույնանուն փառատոնի վրա, որ ամեն տարի անցկացվում է Պրահայում (https://tinyurl.com/n7dpnx8c):

Այս մոդուլում առաջարկում ենք դիտել ֆիլմ լրագրության ու մեդիայի դերի մասին, բայց նույն տրամաբանությամբ կարելի է նաև այլ թեմաներով ֆիլմերի շուրջ կազմակերպել նման քննարկումներ:

Առաջարկվող գործունեություն

1 Դասընթացավարը խմբին հարցեր է տալիս լրագրության ու մեդիայի դերի մասին:

- **Ո՞վ է լրագրողը:**
- **Ձեր կարծիքով՝ որո՞նք են լրագրողի հիմնական հատկանիշները:**
- **Ո՞րն է նրա հիմնական նպատակը:**

Ապա դասընթացավարը ցուցադրում է Media.am-ի «Դեպքի վայրում» շարքի տեսանյութերից մեկը և հետո թեման քննարկում մասնակիցների հետ: Շարքի բոլոր ֆիլմերը պատմում են լրագրողների աշխատանքի մասին:

Օրինակ՝ Մարիամ Տաշչյանի մասին ֆիլմը բնապահ-պանական լրագրության, լրագրողի քաղաքացիական պատասխանատվության մասին է (https://tinyurl.com/c7st3a6y):

«Ազատություն» ռադիոկայանի լրագրող Կարլեն Ասլանյանի մասին ֆիլմը պատմում է, թե ինչպես է լրագրողը լուսաբանել 2018 թվականի Թավշյա հեղափոխության ընթացքը (https://tinyurl.com/y8xjcev8):

Անի Մինասյանը 2020թ. պատերազմի ժամանակ Արցախի հանրային ռադիոյի տնօրենն էր ու պատմում է իր այդ փորձառության մասին (https://tinyurl.com/3mfspk5e):

Իսկ լրագրող Թաթուլ Հակոբյանը ներկայացնում է 2016թ. քառօրյա պատերազմի լուսաբանման իր փորձը (https://tinyurl.com/4ueeunss):

Խորհուրդներ ֆիլմի քննարկման համար

Կարևոր է ֆիլմի դիտումից հետո բոլոր դրվագները ծանրութեթև անել, քննարկել առաջացած հարցերը, ընկալումները, հույզերը, անդրադառնալ ֆիլմը նայելուց առաջ եղած քննարկմանը... Ահա մի քանի տարբերակ.

- Մտագրոհ կամ ընդհանուր քննարկում:
- Խմբերով քննարկում:
- Ամենահիշվող դրվագների դուրս բերում՝ գունավոր կպչուն թղթերի վրա գրի առնելով մեկական բառ կամ

արտահայտություն ու այդպիսով ստանալով ընդհանուր պատկեր՝ հետագա քննարկման համար:

◉ «Մտքերի քարտեզ». այս դեպքում կենտրոնում կարելի է դնել «լրագրող» բառը, ապա հարցեր տալ լրագրության դերի, խնդիրների, նպատակների մասին, ու արվող եզրակացություններն ավելացնել քարտեզին:



Ֆիլմերին հաջորդող գործողությունների մասին լրացուցիչ խորհուրդներ կարող եք գտնել «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի «Ուսուցում վավերագրական ֆիլմերի միջոցով» ձեռնարկում (https://tinyurl.com/2rf2knv6):

Նաև ցանկալի է ունենալ քննարկման թեմայով հյուր՝ փորձագետ: Այս դեպքում խորհուրդ է տրվում հրավիրել վստահելի լրատվամիջոցի լրագրողի կամ խմբագրի:

Հարցեր քննարկման համար

◉ Ի՞նչը տպավորվեց, ի՞նչը հիշվեց ֆիլմից:

◉ Ո՞վ է ֆիլմի հերոսը, ի՞նչ իմացաք նրա ու նրա աշխատանքի մասին:

◉ Ի՞նչ եք կարծում, որն է լրագրողի/լրագրության հիմնական առաքելությունը, նպատակը:

◉ Որո՞նք են լրագրողի աշխատանքի հիմնական դժվարությունները:

◉ Իսկ ի՞նչն է գրավիչ ու հետաքրքիր այս մասնագիտության մեջ:

◉ Ի՞նչ եք կարծում, ի՞նչու է լրագրողների ու մեդիայի աշխատանքը կարևոր:

◉ Ինչպե՞ս է ֆիլմը պատմում լրագրողի աշխատանքի մասին: Ի՞նչ կառուցվածք ունի այս ֆիլմը, ի՞նչ բաղադրիչներ ունի (վիզուալ, ձայնային, տեքստային):

◉ Ովքե՞ր են հեղինակները, ո՞ր կազմակերպությունն է պատրաստել, ի՞նչու:

◉ Ի՞նչ եք կարծում, ո՞րն է այս ֆիլմի ասելիքը՝ ուղերձը:

◉ Արդյո՞ք փոխվեց ձեր պատկերացումը լրագրողի և լրագրության մասին: Ինչպե՞ս:

Քննարկման համար լրագրությունը սահմանելիս կարող եք օգտվել **Բիլ Կովաչի և Թոմ Ռոզենշթայլի «Լրագրության հիմունքները»** գրքից (https://tinyurl.com/zx4t84h5):

«Լրագրության առաջնահերթ նպատակը քաղաքացիներին ազատ և ինքնիշխան լինելու համար անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովելն է»:

Լրագրողն օգնում է մարդուն որոշումներ կայացնել իրական փաստերի ու վերլուծության հիման վրա:

Դասընթացավարը քննարկումն ամփոփում է լրագրության դերի մասին ամերիկյան WBUR հանրային ռադիոյի ավագ թղթակից Բրյուս Գելերմանի կարճ հոլովակով (https://tinyurl.com/w45km9pa):

2 Մտագրոհ՝ ինչպե՞ս տարբերել որակյալ լրագրողական աշխատանքը:

Մասնակիցները թղթի վրա գրում են 3 սկզբունք, որոնցով կարելի է տարբերել լավ լրագրությունը (օրինակ՝ տեղեկությունների աղբյուրները նշված են, կարծիքները հիմնավորված են փաստերով, չկան վիրավորական արտահայտություններ...)

Մտագրոհից հետո դասընթացավարը և հյուր լրագրողը ընթերցում է պատասխանները, ապա մասնակիցներին ծանոթացնում լրագրողների էթիկական սկզբունքներին, որոնք, ըստ էության, որակյալ լրագրության հիմքն են:

Լրագրողներն իրենց աշխատանքում առաջնորդվում են մասնագիտական վարքականոններով, որոնցով սահմանվում է լրագրողական էթիկան:

Հայաստանում 2007 թվականից գործում է «Լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիրը» (https://tinyurl.com/559bhyrv):

Այն սկզբում ստորագրել էր 18 լրատվամիջոց: Այժմ դրանց թիվն անհամեմատ մեծ է՝ 95-ից ավելի: Այդ լրատվամիջոցներն ընտրել են ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմին, որն ընդունում է բողոքներ, քննում և հրապարակում է եզրակացություն կամ փորձագիտական կարծիք:

Դասընթացավարը լրագրողական էթիկայի սկզբունք-ները ներկայացնում է էկրանին, ապա դրանք խորո-թյամբ հասկանալու համար առաջարկում քննարկել օրինակներ:

Դասընթացավարը մասնակիցների հետ քննարկման համար էթիկական վիճելի իրավիճակներ կարող է գտնել Մեսրոպ Հարությունյանի «Լրագրողական էթիկա.

զրույցներ և վերլուծություններ» գրքում (https://tinyurl.com/musd283v):

3 Դասընթացավարը մասնակիցների հետ միասին պատասխանում է լրագրողական էթիկայի մասին հարցաշարին՝ Մեդիամարտ խաղում, ԹԵՄԱ 4 (https://media.am/mediabattle/):

Ժամանակակից թվային միջավայրում ամեն ոք բովանդակություն ստեղծող է: Հանդիպումն ամփոփելիս դասընթացավարը մասնակիցներին առաջարկում է գրի առնել էթիկայի առնվազն 3 սկզբունք, որոնք ամեն օգտատեր պետք է պահպանի սոցիալական ցանցերում գրառում անելիս, նկար կամ տեսանյութ տեղադրելիս, մեկնաբանություն թողնելիս...

Գեղարվեստական ֆիլմեր լրագրության մասին

Որպես այլընտրանք՝ կարելի է այս թեմայով գեղարվեստական ֆիլմ դիտել և քննարկել: Օրինակ՝

◉ **Spotlight (Ուշադրության կենտրոնում, В центре внимания)** - 2015 թվականի ֆիլմը ներկայացնում է «Բոստոն Գլոբ» թերթի հետաքննող խմբի աշխատանքը, որը բացահայտեց Կաթոլիկ քահանաների կողմից երեխաների նկատմամբ սեռական ոտնձգությունները. ֆիլմը ցույց է տալիս հետաքննության մեթոդներն ու լրագրության էթիկական պատասխանատվությունը:

◉ **The Post (Գաղտնի դոսյե, Секретное досье)** - 2017 թվականի ֆիլմը պատկերում է 1970-ականների իրական պատմություն այն մասին, թե ինչպես է «Վաշինգտոն Փոստը» կառավարական ճնշումների ֆոնին բացահայտում Պենտագոնի փաստաթղթերը և վերլուծում մամուլի անկախության ու խոսքի ազատության թեմաները:

◉ **All the President's Men (Նախագահի բոլոր մարդիկ, Вся президентская рать)** - 1976 թվականին թողարկված այս ֆիլմը պատմում է «Վաշինգտոն Փոստի» լրագրողներ Բոբ Ուդվորդի և Քառլ Բեռնշտեյնի հետաքննության մասին, որը հանգեցրեց Վոթերգեյթյան սկանդալի բացահայտմանը, և ընդգծում մամուլի դերը քաղաքական հաշվետվողականության մեջ:

Այլ թեմաներով ֆիլմեր

Կարելի է նաև ընտրել այլ թեմաներով ֆիլմեր և քննարկել դրանք: Կարևոր է, որ ֆիլմերը լինեն որակյալ և լիցենզավորված:

Խրախուսվում է ունենալ առցանց ֆիլմադարանների բաժանորդագրություն, նաև համագործակցել Հանրային հեռուստատեսության, Ազգային կինոկենտրոնի, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի և այլ կառույցների հետ՝ ֆիլմերի ձեռքբերման համար:

Կարելի է օգտվել լրատվամիջոցների պատրաստած ֆիլմերից, որոնք անվճար հասանելի են առցանց, ինչպես օրինակ՝

◉ **ՍիվիլՆեթի վավերագրական ֆիլմերի շարքը**: https://tinyurl.com/bdzd4y6c

◉ **«Ֆակտոր TV»-ի «Թակարդ N420. Երիտասարդները թմրանյութի ճիրաններում»** ֆիլմը https://tinyurl.com/2varbddh

Ֆիլմի ցուցադրման ուղեցույցը
https://tinyurl.com/ye3cc3wy

Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի պատրաստած ֆիլմերը և տեսանյութերը բաց են կրթական նպատակով օգտագործման համար: Օրինակ՝

◉ «**Ծնորհակալություն, հայրիկ»** ֆիլմը հայրերի ու դուստրերի հարաբերությունների մասին https://tinyurl.com/ymhnzek4

◉ **«Այբ, բեն, գիմ»** ֆիլմը, որ պատմում է Հայրիկ Մուրադյանի մասին https://tinyurl.com/49yew4sx

◉ **«Մեծ քաղաքի որսորդը»** ֆիլմը՝ լուսանկարիչ Արա Գյուլերի մասին https://tinyurl.com/2djwydwd

◉ **«Համակարտությունների աշխարհ»** ֆիլմերի շարքը՝ եվրոպական կոնֆլիկտների մասին https://tinyurl.com/mshpnwrw

◉ **«Պահապանները»** ֆիլմը՝ խաչքարերի մասին https://tinyurl.com/35ru5zeb

Օգտակար ռեսուրսներ

◉ Լուրը, լրատվությունն ու հասարակությունը, Գեղամ Վարդանյան

https://tinyurl.com/m5umd4r

◉ Լրագրողական էթիկա, զրույցներ և վերլուծություններ, Մեսրոպ Հարությունյան

https://tinyurl.com/musd283v

◉ ԹԵՄԱ 4. Մեդիայի գրված և չգրված կանոնները, «Մեդիա iգիտություն» ձեռնարկում [https://tinyurl.com/yyj6smvy] և թեմայի առցանց կուրսը

https://tinyurl.com/bdfyxs7v

◉ ԹԵՄԱ 4. Մեդիայի ազատությունն ու սահմանները, Մեդիագրագիտություն ձեռնարկում

https://tinyurl.com/m32u5sxh

◉ «Ուսուցում վավերագրական ֆիլմերի միջոցով» ձեռնարկ

https://tinyurl.com/2rf2knv6

ՄՈԴՈՒԼ 3

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՈՒՄ ԵՎ ՍՏՈՒԳՈՒՄ. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐ

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ	
	▸ Մասնակիցները կիմանան տեղեկատվության աղբյուրների տեսակները: ▸ Կծանոթանան առցանց որոնման համակարգերին: ▸ Կկարողանան արդյունավետ օնլայն որոնում կատարել: ▸ Կիմանան կասկածելի տեղեկությունները ճանաչելու հիմնական սկզբունքները:

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ	ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ	ԱՆՀՐԱԺԵՇՏ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ
90 ր	մեծահասակներ (ծնողներ, ուսուցիչներ)	▸ պրոյեկտոր և էկրան ▸ որակյալ բարձրախոս ▸ սենյակում լույսի կարգավորման հնարավորություն ▸ որակյալ ինտերնետ կապ ▸ թուղթ, գրիչ

Գրադարանը ինֆորմացիայի կենտրոն է, մի վայր, որտեղ մարդը գալիս է գրականություն, բովանդակություն, տեղեկություն գտնելու: Ժամանակակից գրադարանը նաև թվային է, այն նաև թվային տեղեկատվության շտեմարան է, և գրադարանի գործառույթն է՝ օգնել մարդուն կողմնորոշվել ոչ միայն առկա պահոցում, այլ նաև առցանց տեղեկատվական միջավայրում:

Առաջարկվող գործունեությունը

1 Դասընթացավարը թեմայի քննարկումը սկսում է ներածական հարցերով.

- **Ի՞նչ նոր բան եք իմացել այսօր, մինչև այստեղ հասնելը:**
- **Որտեղի՞ց, ինչպե՞ս:**
- **Ինչ-որ նոր բան իմացե՞լ եք այսօր ուսուցչից, գրքերից, լուրերից, հեռախոսին եկած հաղորդագրությունից, դրսում փակցրած հայտարարություններից...**

Ապա դասընթացավարն առաջարկում է քննարկման արդյունքում նշված աղբյուրները դասակարգել 2 տեսակի՝ **առաջնային** և **երկրորդային**:

Առաջնային աղբյուրը հեղինակի աշխատանքն է, որը այլոց կողմից վերամշակումներ չի անցել. օրիգինալ, «առաջին ձեռքից» տեղեկությունն է: Այդպիսին են՝ ելույթները, վկայությունները, ձեռագրերը, օրիգինալ լուսանկարները և արվեստի գործերը, հետազոտման տվյալները՝ հարցման արդյունքներ, հաշվարկներ, վիճակագրություն, ինչպես նաև դեպքի վայրից ստացված նորությունները, ուղիղ եթերները, հարցազրույցները և այլն:

Երկրորդային աղբյուրը օգտագործում են առաջնային աղբյուրները, դրանք վերլուծում, վերամշակում են: Դրանք են՝ վերլուծությունները, հանրագիտարաններն ու դասագրքերը, լրագրողական վերլուծական հաղորդումները և մեկնաբանությունները:

Դասընթացավարը գրատախտակին կամ պատին փակցնում է 2 պիտակ՝ առաջնային աղբյուր, երկրորդային աղբյուր: Մասնակիցներին բաժանված են թղթիկների վրա գրված աղբյուրներ՝ գեղարվեստական գիրք, հանրագիտարան, օրենք, վերլուծական հոդված, լուսանկար, լուր, հեռուստատեսային հաղորդում, կարճ հաղորդագրություն... Մասնակիցները պիտի դրանք տարբերակեն և փակցնեն ըստ աղբյուրի տեսակի:

Հետո դասընթացավարն ուսումնասիրում է պատասխանները և խմբի հետ քննարկում, շտկումներ անում դասակարգման մեջ՝ զուգահեռաբար բացատրելով դրանց տարբերությունը:

2 Վիքիպեդիան առցանց տեղեկատվության հիմնական աղբյուրներից է, որից շատ են օգտվում նաև կրթության ոլորտի մարդիկ՝ ուսուցիչները, ինչպես նաեւ աշակերտներն ու ուսանողները:

Դասընթացավարը էկրանին բացում է Վիքիպեդիայի էջն ու հարցնում մասնակիցներին՝ արդյո՞ք Վիքիպեդիան առաջնային աղբյուր է: Ի՞նչ տեսակի բովանդակություն է Վիքիպեդիայում: Ովքե՞ր են գրում, որո՞նք են առաջնային աղբյուրները:

Քննարկման ժամանակ դասընթացավարը բացատրում է Վիքիպեդիայի և դասական հանրագիտարանների տարբերությունը. եթե հանրագիտարանը ունի հստակ մասնագետ հեղինակներ, խմբագիրներ և հրատարակիչ, որոնք պատասխանատվություն են կրում բովանդակության համար, ապա Վիքիպեդիայում բովանդակություն կարող է ստեղծել ցանկացած մարդ, իսկ խմբագիրները կամավորներ են:

Այս ընկալումը ամրապնդելու համար դասընթացավարը մասնակիցների հետ միասին Վիքիպեդիայում հոդված է ստեղծում կամ խմբագրում:

Կարելի է փորձի համար սխալ տեղեկություն տեղադրել Վիքի հոդվածում՝ ստուգելու համար՝ արդյո՞ք այն կուղղվի և որքան ժամանակում: Հաջորդ հանդիպմանը կամ այդ օրվա ավարտին անհրաժեշտ է ստուգել արդյունքը, ու եթե չի փոփոխվել, ուղղել սխալը: Սա մասնակիցներին

կօգնի հետևություններ անել վստահելի ու կասկածելի տեղեկության մասին և հիշել, որ Վիքիպեդիայում, ինչպես համացանցի շատ այլ հարթակներում, օգտատերերի կողմից ստեղծվող բովանդակություն է (user generated content), որը ոչ միշտ է ստուգված:

3 Առցանց որոնումը կարևոր հմտություն է, այն սովորաբար սկսվում է որոնողական համակարգից, օրինակ՝ Գուգլից, Յանդեքսից կամ Բինգից: Սրանք առցանց որոնման համակարգեր են, որոնք տարբեր աղբյուրներից, սերվերներից գտնում ու մարդուն առաջարկում են հարցման պատասխանը: Որոնողական համակարգերի ալգորիթմները առաջնահերթորեն առաջարկում են այն կայքերը/աղբյուրները, որոնք ավելի շատ դիտելիություն ու հղումներ ունեն, բայց նաև հաշվի են առնում որոնողի անձնական տվյալները, նախասիրությունները, եթե դրանք հասանելի են հարթակում. եթե մարդը որոնում է Հայաստանից, ապա հավանական է, որ արդյունքների առաջին հորիզոնականներում հայաստանյան օրինակներ կլինեն:

Դասընթացավարը մասնակիցներին հարցնում է՝ արդյո՞ք իրենց կարծիքով Գուգլը աղբյուր է, և պատասխանները քննարկելով՝ բացատրում որոնողական համակարգի աշխատանքի սկզբունքն ու դրա տարբերությունը տեղեկատվության աղբյուրներից:

4 Դասընթացավարը մասնակիցների հետ անում է գործնական վարժություն՝ փորձարկելու խորացված որոնման գործիքները, որոնք թույլ են տալիս ավելի արագ և արդյունավետ գտնել անհրաժեշտ տեղեկությունը:

Դիտել «Մեդիա iգիտություն» դասընթացի տեսանյութը (https://tinyurl.com/2urwsp6d):

Խորհուրդ. ցանկալի է, որ դասընթացավարը նախապես որոշի որոնվող բառերը, արտահայտությունները և փորձարկի դրանց որոնումը՝ տեսանյութի օրինակով:

5 Նկարներ, տեսանյութեր որոնելիս և դրանք օգտագործելիս կարևոր է հիշել հեղինակային իրավունքի մասին: Եթե որևէ բան հասանելի է համացանցում, չի նշանակում, թե կարելի է անվճար և կամայական օգտագործել: Եթե դա ազատ օգտագործման համար չէ, ապա պետք է նախ թույլտվություն ստանալ հեղինակից: Բոլոր դեպքերում, կարևոր է տեղեկության, նաև՝ լուսանկարի, տեսանյութի աղբյուրի ու հեղինակի հիշատակումը:

Ազատ օգտագործման նյութերի համար կարելի է օգտվել Creative Commons հարթակից (https://search.creativecommons.org/), կամ ընտրել Creative Commons տարբերակը հենց Յություբում, Գուգլում կամ այլ

հարթակում որոնելիս: Դասընթացավարը փորձարկում է այս գործիքը մասնակիցների հետ:

6 Տեղեկություններ հավաքելու համար այսօր կարելի է դիմել նաև արհեստական բանականությանը (ԱԲ), որը շատ արագ կարող է ուսումնասիրել միլիոնավոր աղբյուրներ ու գտնել որոնվող տեղեկությունը:

Այդուհանդերձ, ԱԲ-ն ունենում է «ցնորքներ» կամ «հալյուցինացիաներ». երբեմն շփոթում է տվյալները: Սխալներից խուսափելու համար անհրաժեշտ է տալ հստակ հրահանգներ և պահանջել տեղեկությունների սկզբնաղբյուրներրոու անպայման ստուգել ինֆորմացիան:

Ահա 3 խորհուրդ հենց ChatGPT-ից՝ այդ համակարգով արդյունավետ որոնման համար.

◉ Եղիր հստակ և համակողմանի հարց տուր, նշիր նպատակը, ձևաչափը և ժամանակային սահմանը:

◉ Հրահանգի օրինակ (prompt). «Տո՛ւր ինձ 3 համառոտ (2–3 նախադասությամբ) փաստագրական աղբյուր Հայաստանում ընթերցանության մակարդակի մասին, հրապարակման տարին՝ 2018–2024 թթ., դպրոցական ռեֆերատում օգտագործելու համար»:

◉ Խնդրիր տեղեկությունների սկզբնաղբյուրները և հղումները:

◉ Հրահանգի օրինակ. «Պատրաստիր 100 բառանոց ամփոփագիր առողջ սննդակարգի հիմնական սկզբունքների մասին՝ ներառելով բոլոր օգտագործված աղբյուրների հղումները (URL) ու կարգավիճակը՝ պաշտոնական/ակադեմիական/բլոգ»:

◉ Առաջարկիր պնդում և ChatGPT-ին խնդրիր գտնել այդ միտքը հերքող կամ հաստատող աղբյուրներ, ինչպես նաև տալ եզրակացություն, թե նշված պնդումը որքանով է արժանահավատ: Հրահանգի օրինակ.

«Հայաստանում դեռահասների կողմից ինտերնետի օգտագործումը 2023 թվականին 85% է - ստուգիր այս պնդումը պաշտոնական աղբյուրներում և անկախ հետազոտություններում, տուր ինձ այս պնդման արժանահավատության աստիճանը (բարձր/միջին/ցածր) և բացատրիր՝ ինչ է անհրաժեշտ՝ պնդումը հիմնավորելու ու ավելի վստահելի դարձնելու համար»:

7 Դասընթացավարը մասնակիցներին բաժանում է խմբերի, որոնցից յուրաքանչյուրը պիտի օգտագործի որոնողական համակարգերից մեկը (Գուգլ, Յանդեքս, Բինգ, ChatGPT)՝ գտնելու այս հարցերի պատասխանները:

◉ Հանրաճանաչ երգչի կամ գրողի կենսագրություն

◉ ՀՀ պետական համալսարանի ընդունելության կարգը

◉ ՀՀ ֆուտբոլի հավաքականի վերջին խաղի մանրամասները

◉ Երևանում առաջիկա ամսվա մշակութային իրադարձությունների ցանկը

8 Դասընթացավարը ցույց է տալիս մի քանի պաշտոնական և ակադեմիական առցանց ռեսուրսներ և աղբյուրներ և հարցնում է, թե մասնակիցներն ինչ վստահելի առցանց ռեսուրսներից են օգտվում տեղեկատվության համար:

Պաշտոնական/պետական աղբյուրների օրինակներ

◉ ԿԳՄՍ տվյալների բազա
https://reports.emis.am/#/

◉ ՀՀ վիճակագրական կոմիտե
https://www.armstat.am/am/

◉ World Bank Open Data
https://data.worldbank.org/

◉ Ազգային գրադարանի թվային շտեմարան
https://tert.nla.am/

9 Առցանց տեղեկությունները շատ հաճախ ունենում են ստուգման կարիք: Դրա համար կարևոր է հիշել մի քանի սկզբունք, որ դասընթացավարը կարող է տպած բաժանել մասնակիցներին:

Հուշումներ կայքերը ստուգելու համար

◉ Կայքի անունն ու հասցեն. երբ, օրինակ, լրատվական ներկայացող կայքի դոմեյնի հասցեն hopar.info է,

(այդպիսի կայք իրականում եղել է), իսկ կարգախոսն է՝ «Միայն սենսացիոն լուրեր», ապա այն ոչ հավաստի աղբյուր լինելու մեծ շանսեր ունի:

◉ Կայքերն ունենում են «Մեր մասին» բաժին, որտեղ ներկայացվում է, թե որ կազմակերպության կամ անհատի աշխատանքն ենք մենք կարդում, լսում կամ դիտում: Եթե կայքը չունի «Մեր մասին» բաժին, ապա այն չի ապահովել հավաստի լինելու ևս մեկ ցուցանիշ:

◉ Կոնտակտային տվյալները՝ հասցեն, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն ևս հավաստիության նշան են: Եթե դրանք բացակայում են, ապա արժե, որ մենք անվստահություն ունենանք այդ կայքի նկատմամբ:

◉ Ուշադրություն դարձրեք կայքի տեսքին, ներկայացվող գովազդներին, թեմաներին և ուղղվածությանը: Եթե կայքում միայն սենսացիոն ու կարճ տեքստերով հրապարակումներ են, ապա այն առնվազն լրացուցիչ հետազոտման կարիք ունի:

◉ Կայքի հոդվածների վերնագրերում հարցականները և «սկանդալային» բառերը, օրինակ՝ «ԴՈՒՔ ՉԵՔ ՀԱՎԱՏԱ, ԹԵ ԻՆՉ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ», ոչ հավաստի լինելու ևս մեկ նշան են:

◉ Ստուգե՛ք հրապարակման ամսաթիվը: Երբեմն հին լուրը որպես նոր է ներկայացվում:

◉ Լրատվական կայքերում հոդվածները սովորաբար հեղինակներ են ունենում: Եթե հոդվածներն անստորագիր են, ու կայքում լրագրողների մասին որևէ տեղեկություն չկա, ապա այն դժվար է իրեն հարգող լրատվական կայք համարել:

◉ Լուրերը հղումներ ու աղբյուրներ են ունենում: Եթե հոդվածներում դրանք բացակայում են, ապա առնվազն գործ ունենք ոչ որակյալ լրագրության հետ:

◉ Եթե հանդիպում եք համատարած տառասխալների ու ոճական սխալների, ապա այդ կայքը նույնպես չի կարող համարվել վստահելի: Լրատվական կայքերում հոդվածները սրբագրվում են, ու չնայած վրիպակներ հնարավոր են ամեն տեղ, սակայն դրանք համատարած չեն:

Հուշումներ սոցիալական ցանցերի էջերի իսկությունը ստուգելու համար

◉ Ֆեյսբուքում հայտնի մարդկանց, լրատվամիջոցների էջերը կրում են Verified կապույտ նշանը: Այն ինքնին՝ արդեն էջի հավաստիության նշան է:

◉ Ուշադրություն դարձրեք էջի անվանմանը, էջի հետևորդների թվին: Հայաստանում դեպք կա գրանցված, երբ Քիմ Քարդաշյանի անունով ներկայացող ֆեյսբուքյան էջը կեղծ խաղարկության միջոցով մարդկանցից գումարներ էր շորթել: Էջում Քարդաշյանի լուսանկարներն էին, սակայն էջի անվանումն էր Irsan-fadli12, և այն ուներ ընդամենը 315 հետևորդ: Պարզ է, որ Քարդաշյանի լսարանը այդքան փոքր չէ: Սա դասական

դեպք է, երբ մարդկանց՝ հեշտ գումար աշխատելու ցանկությունների վրա ազդելով, չարագործները Ֆեյսբուքում կարողացել էին գումարներ շորթել:

◉ Ֆեյսբուքում էջերն ունեն «Էջի թափանցիկություն» բաժինը, որտեղ կարելի է կարդալ, թե էջը երբ է ստեղծվել, արդյո՞ք այն մեկ այլ էջի հետ չի միացել, ո՞ր երկրներից են էջի համակարգողները, ու ինչ գովազդներ է Ֆեյսբուքում պատվիրել այդ էջը:

◉ Ֆեյսբուքի էջի դեպքում նույնպես պարտադիր է, որ կոնտակտային տվյալներն ու «Մեր մասին» բաժինը լրացված լինեն:

Մասնակիցները խմբերով փորձում են ստուգել մի քանի առցանց կայքեր:

Օրինակ՝

www.Media.am
www.past.am
www.hetq.am
https://www.facebook.com/MirraCosmetic
https://www.facebook.com/samvel

9 Գրադարանը՝ որպես տեղեկատվության շտեմարան: Դասընթացավարը մասնակիցներին ներկայացնում է նաև, թե ինչպես են դասակարգված գրքերն ու ամսագրերը գրադարանում, ծանոթացնում է կատալոգին, առկայության դեպքում՝ առցանց կատալոգին: Փորձարկում են այս համակարգում որոնումը:

ՄՈԴՈՒԼ 4

ՄԵԴԻԱՅԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ	▸ Մասնակիցները կծանոթանան մեդիայի տեսակների առանձնահատկություններին: ▸ Կհասկանան մեդիայի տեսակների գործիքակազմն ու ազդեցության ձևերը: ▸ Կկարողանան վերլուծել մեդիա նյութերը: ▸ Կկարողանան ստեղծել պատմություններ տարբեր մեդիա գործիքներով:

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ	ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ	ԱՆՀՐԱԺԵՇՏ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ
90 ր	միջին և բարձր դպրոցի աշակերտներ	▸ պրոյեկտոր և էկրան ▸ բարձրախոս ▸ սենյակում լույսի կարգավորման հնարավորություն ▸ առվնազն 3 համակարգիչ՝ խմբային աշխատանքի համար ▸ որակյալ ինտերնետ կապ ▸ թուղթ, գրիչ

Մեդիան բազմազան է և ամենուր: Ականջակալում հնչում է երաժշտություն, ձեռքի սմարթ ժամացույցին գալիս են հաղորդագրություններ, հեռախոսով ֆիլմեր ենք դիտում, սոցցանցերում հաղորդակցվում ենք, գնումներ ու բանկային գործարքներ անում, ստուգում եղանակն ու ճանապարհի խցանումները... Մեդիա են նաև ֆիլմը, թատրոնը, գիրքը, պաստառը, պատերին արված գրաֆիտին ու փակցված հայտարարությունը, անգամ կոնֆետի թուղթը մեդիա է՝ քանի որ ուղերձ է պարունակում:

Այս մոդուլը երեխաներին կօգնի հասկանալ մեդիայի տեսակների տարբերություններն ու կապերը, ուսումնասիրել դրանց գործիքակազմն ու ազդեցության մեխանիզմները:

Մոդուլն անցկացնելու համար կարևոր է, որ դասընթացավարը ուսումնասիրի ՄՆԿ «Մեդիա ուգիտություն» ձեռնարկի «Խոսք, պատկեր, ձայն. վարպետություն և հնարքներ» թեման, ինչպես նաև «Օգտակար ռեսուրսներ» բաժնում նշված մյուս նյութերը:

Առաջարկվող գործունեություն

1 Դասընթացավարն ընտրում է որևէ հայտնի գրական գործ, որն ունի նաև էկրանավորում, թատերական բեմադրություն և/կամ այլ մեկնաբանություն: Ապա մասնակիցները խմբերով ուսումնասիրում են տվյալ գործի մեկնաբանություններից մեկը:

Գրական գործերի օրինակներ

1. **Ալեքսանդր Շիրվանզադե, «Քաոս»**
   - վեպը,
   - համանուն ֆիլմը՝ նկարահանված 1973թ. https://tinyurl.com/4x2y28sz ,
   - ժամանակակից ֆիլմը՝ 2019թ.
   մաս 1 https://tinyurl.com/ym29tdcv,
   մաս 2 https://tinyurl.com/ytkz253h:

2. «Սասնա Ծռեր».

- Էպոսը,
- Թումանյանի «Սասունցի Դավիթ» մշակումը https://tinyurl.com/bdh4fbbs,
- Չարենցի «Սասունցի Դավիթ» պոեմը https://tinyurl.com/bdjes73b,
- Հակոբ Կոջոյանի «Սասունցի Դավիթ» կտավը https://tinyurl.com/6ntwhetd,
- Երվանդ Քոչարի «Սասունցի Դավիթ» քանդակը https://tinyurl.com/4mvnckw3,
- «Սասնա Ծռեր» մուլտֆիլմը, 2010թ. https://tinyurl.com/muuy8snh,
- «Ճանապարհ դեպի Սասունցի Դավիթ» ֆիլմը, 1987թ. https://tinyurl.com/ywby94eh:

3. «Կարմիր գլխարկը» հեքիաթը.

- Շառլ Պերոյի «Կարմիր գլխարկը», որտեղ հեքիաթն ավարտվում է նրանով, որ գայլն ուտում է աղջկան,
- Գրիմ Եղբայրների «Կարմիր գլխարկը» հեքիաթը, որտեղ որսորդները սպանում են գայլին ու փրկում աղջկան ու տատիկին,
- Հովհաննես Թումանյանի «Կարմրիկը»,
- «Կարմիր գլխարկի մասին» հեքիաթ-ֆիլմը (Լեոնիդ Նեչաև, ԽՍՀՄ, 1977),
- Գորշ գայլը and Կարմիր գլխարկը» մուլտֆիլմը (Հարրի Բարդին, ԽՍՀՄ, 1990) https://tinyurl.com/dnv38nee,
- Խամաճիկների թատրոնի տիկնիկային ներկայացումը https://tinyurl.com/2tt5uu73,

• Ռախմանինովի «Կարմիր գլխարկ» երաժշտական էտյուդը https://tinyurl.com/mr467arx,

• Հանրային ռադիոյի մանկական աուդիոհեքիաթը https://tinyurl.com/43d9mdtj:

Դասընթացավարը նախապես ընտրում է գործերից հատվածներ առաջադրանքի համար. գրքերից մի քանի հատկանշական մեջբերումներ, օրինակ՝ տարբերվող վերջաբանները, նաև՝ տարբեր հրատարակությունների պատկերազարդումները, ֆիլմերից որոշ դրվագներ, երաժտությունից հատվածներ, որոնք մասնակիցները պիտի ուսումնասիրեն ու քննարկեն: Ցանկալի է ընտրել գործ, պատմություն, որ հանրաճանաչ է, կամ նախապես մասնակիցներին ուղարկել բնօրինակը՝ մինչև հանդիպումը կարդալու/դիտելու համար:

Դասընթացավարը մասնակիցներին բաժանում է խմբերի՝ ըստ մեդիայի տեսակների:

Օրինակ՝

- **Խումբ 1- գիրք/տեքստ,**
- **Խումբ 2 - ֆիլմ/անիմացիա/պատկեր,**
- **Խումբ 3-երաժշտություն/ձայն:**

Խմբերը 20 րոպե ուսումնասիրում են այդ պատմությունը մեդիայի մի տեսակով, ապա պատասխանում հարցաշարին:

Հարցաշարի նմուշը՝ «Կարմիր գլխարկի» օրինակով:

Ի՞նչ ժանրի/ոճի պատմություն է:	
Ինչի՞ մասին է պատմությունը:	
Ո՞րն է պատմության ուղերձը:	
Ամենատպավորիչը ի՞նչն էր:	
Ի՞նչ տրամադրություն է հաղորդում:	
Ինչպիսի՞ն է Կարմիր գլխարկը, նկարագրեք նրա արտաքինն ու բնավորությունը:	
Ինչպիսի՞ն է գայլը, նկարագրեք:	
Ո՞րն է այս պատմության ուղերձը:	
Ո՞ւմ համար է այս պատմությունը:	
Ի՞նչ հնարքներ են օգտագործված՝ պատմությունն ավելի գրավիչ ու ազդեցիկ դարձնելու համար:	
Ո՞րն է մեդիայի տվյալ տեսակով գործի մեկնաբանության առանձնահատկությունը:	

Խմբային քննարման վերջում խմբերը ներկայացնում են իրենց պատասխանները՝ եզրահանգումները: Դասընթացավարը համեմատում է դրանք ու ամբողջ խմբի հետ քննարկում տարբերություններն ու նմանությունները՝ օգնելով նրանց հասկանալ, թե ինչպես են մեդիայի տեսակը, հեղինակային խմբի

փոփոխությունը, արտահայտչամիջոցների ընտրությունը, ժամանակաշրջանը ազդում պատմության ու դրա ընկալման վրա:

2 Դասընթացավարը խմբերին առաջարկում է ստեղծագործել և նույն թեմայով/նույն պատմության հիման վրա ստեղծել նոր մեդիա պատումներ՝ ժամանակակից մեկնաբանությամբ:

- **Խումբ 1 - պատմություն միայն էմոջիներով**
- **Խումբ 2 - պատմություն սոցցանցերում** (ինչպիսին կլիներ պատմությունը, եթե գայլը, Կարմիր գլխարկը, նրա մայրիկն ու տատիկը լինեին ֆեյսբուքում կամ ինստագրամում)
- **Խումբ 3 - հարցազրույց** հերոսներից մեկի հետ կամ լրագրողական նյութ այս պատմության մասին
- **Խումբ 4 - Կարմիր գլխարկի վլոգը/ռիլը**
- **Խումբ 5 - կոմիքս**

Վերջում խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքները, մյուս թիմերից ստանում են հարցեր, առաջարկներ, դիտարկումներ:

Օգտակար ռեսուրսներ

- Թեմա 1, 6,7,8,9 «Մեդիագրագիտություն» ձեռնարկում, Ինտերնյուս, 2013 https://tinyurl.com/mub6j7ue
- Խոսք, պատկեր, ձայն. վարպետություն և հնարքներ. «Մեդիա ıգիտություն» առցանց դասընթացում, ՄՆԿ, 2022 https://tinyurl.com/44dnxvfd
- «Մեդիամարտ» մեդիագրագիտության խաղ, ՄՆԿ https://media.am/mediabattle/

Աստղիկ Բալայան

Մեդիագրագիտությունը տարրական ծրագրում

Լուսինե Գրիգորյան

Մեդիագրագիտությունը գրադարանում

Գեղամ Վարդանյան, Օֆելյա Սիմոնյան

Ճանաչել ու դիմագրավել ապատեղեկատվությանը. դեպքերի քննարկում

ISBN 978-9939-1-2251-9
9 789939 122519